

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022թթ. միջոցառումների ծրագրի նախագծի վերաբերյալ

2018թ. դեկտեմբերի 19-ին ՀՀ արդարադատության նախարարության իրավական ակտերի նախագծերի միասնական www.e-draft.am կայքում հրապարակվել է ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022թթ. միջոցառումների ծրագրի նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ): Վերջինիս վերաբերյալ դիտարկումներ և առաջարկություններ ներկայացնելու ժամկետը սահմանվել է մինչև 2019թ. հունվարի 8-ը:

Հարկ ենք համարում բարձրաձայնել, որ ինչպես նախագծի մշակման գործընթացը, այնպես էլ դրա կառուցվածքը և բովանդակությունը խնդրահարույց են, ինչի վերաբերյալ դիտարկումները ներկայացված են ստորև:

Գործընթաց

- Նախագծի մշակման գործընթացը եղել է ոչ թափանցիկ և անբավարար մասնակցային՝ համեմատած նախորդ երկու հակակոռուպցիոն ռազմավարությունների և դրանց իրականացման միջոցառումների ծրագրերի (2009-2012թթ. և 2015-2018թթ.) մշակման գործընթացների հետ, որոնցում շահագրգիռ բոլոր կազմակերպությունները ներգրավվել են նախքան նշված փաստաթղթերի պաշտոնական շրջանառումը, ուստիև ավելի մեծ հնարավորություն են ունեցել ազդելու դրանց բովանդակության վրա:
- Նոր՝ չորրորդ հակակոռուպցիոն ռազմավարության մշակմանն առնչվող միակ քննարկումը եղել է 2018թ. հունվարին, այսինքն՝ նախորդ կառավարության օրոք: Հեղափոխությունից հետո նոր ռազմավարության մշակման գործում քաղհասարակության ներգրավման որևէ պաշտոնական գործընթաց չի եղել, իսկ հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացված առաջարկությունները նույնիսկ չեն քննարկվել:
- Նախագիծը 2018թ. դեկտեմբերի 19-ին ներկայացվել է մի խումբ հասարակական կազմակերպությունների շրջանում և նույն օրը տեղադրվել www.e-draft.am կայքում՝ առաջարկություններ ներկայացնելու վերջնաժամկետը սահմանելով 14 օր՝ մինչև 2019թ. հունվարի 3-ը, որն այնուհետ երկարաձգվել է մինչև հունվարի 8-ը՝ 20 օր: Հաշվի առնելով, որ այս ընթացքում 12 օր ոչ աշխատանքային, տոնական օրեր են, բնականաբար սահմանափակվում են շահագրգիռ քաղաքացիների և կազմակերպությունների՝ փաստաթղթին ծանոթանալու և առաջարկություններով հանդես գալու հնարավորությունները:
- Ակնհայտ է, որ ներկայացված նախագիծը նախապատրաստվել է ի միջի այլոց, անփույթ և ներկայացվել հապճեպ կերպով՝ հասցնելու այն հրապարակել մինչև երրորդ հակակոռուպցիոն ռազմավարության վերջնաժամկետը՝ 2018թ. դեկտեմբերի 31-ը: Նախագծի առաջ մղման ոչ թափանցիկ և ոչ մասնակցային գործընթացով ՀՀ արդարադատության նախարարությունը անպատասխանու վարքագիծ է դրսևորել ինչպես շահագրգիռ հանրության, այնպես էլ՝ հենց փաստաթղթի ու դրա կարևորության նկատմամբ:

Կառուցվածք

- Ի լրումն փաստաթղթի մշակման ինդրահարույց գործընթացների, Նախագիծը չի համապատասխանում ՀՀ կառավարության 2015թ. հունվարի 22-ի N2 արձանագրային որոշմամբ հաստատված Հայեցակարգերի, ռազմավարությունների, ծրագրերի կազմման մեթոդական ուղեցույցի պահանջներին:
- Մասնավորապես՝ Նախագծի ռազմավարության հատվածում բացակայում են այնպիսի կարևորագույն հարցեր, ինչպիսիք են կատարողականի ցուցանիշները, նախատեսված միջոցառումների ղեկավարման մոնիտորինգի և դրանց հաշվարկների իրականացման ընթացակարգերը և այլն: Փաստաթուղթը դրական լույսի ներքո թվարկում է նախկինում արված գործողությունները՝ առանց կատարելու դրանց արդյունավետության գնահատում:
- Հաշվի առնելով, որ ռազմավարությունից առաջ չի մշակվել հայեցակարգ, ինչը կլիներ տրամաբանական, և համաձայն վերոնշյալ Ուղեցույցով ենթադրյալ գործընթացի՝ Նախագծից դուրս են մնում բազմաթիվ հարցեր: Մասնավորապես, պատշաճ ներկայացված չի նպատակը, որի շրջանակում, ըստ նշված Ուղեցույցի, կնկարագրվեն ամկա իրավիճակը և գործող/նախկին քաղաքականության հետ կապված խնդիրները, և հասկանալի կլիներ, թե ինչ խնդիր է լուծում նոր ռազմավարությունը: Բացակայում է միջոցառումների համար հիմք հանդիսացող խնդիրների վերլուծությունը, առաջիկա անելիքներն էլ, ըստ այդմ, ներկայացված են կցկտուր և առանց պատշաճ հիմնավորումների: Արդյունքում՝ հասկանալի չէ առանձին միջոցառումների կապը ռազմավարության հետ և դրանց իմաստավորումը: Մասնավորապես՝ անըմբռնելի է որոշ միջոցառումների դերն ու նշանակությունը կոռուպցիայի դեմ պայքարում, ինչպես օրինակ՝ լրբբիստական գործունեության օրենսդրական կարգավորումը:

Բովանդակություն

- Նախագծի անփույթ և հապշտապ նախապատրաստումն իր ազդեցությունն է ունեցել փաստաթղթի բովանդակության վրա: Այն, ակնհայտորեն, հանդիսանում է նախորդ իշխանությունների որդեգրած ձևական մոտեցումների տրամաբանական շարունակությունը և չի արտացոլում կոռուպցիայի դեմ պայքարին միտված քաղաքական կամքի առկայությունը:
- Նախագծի ռազմավարության հատվածի *Ներածության* առաջին իսկ պարբերությունում նշված է. «Վերջին տարիների ընթացքում ՀՀ կառավարությունը հետևողական պայքար է մղում կոռուպցիայի դեմ՝ հակակոռուպցիոն պայքարը ճանաչելով իր գործունեության առանցքային ուղղություններից մեկը»: «Ռազմավարություն» կոչվող այս փաստաթղթում որևէ խոսք չկա այն մասին, որ եղել է համաժողովրդական ընդվզում կոռումպացված իշխանությունների դեմ, որ եղել է շրջադարձային փոփոխություն կոռուպցիայի դեմ պայքարում, և որ նոր կառավարությունը նախկին իմիտացիոն քաղաքականության փոխարեն որդեգրել է կոռուպցիան արմատախիլ անելու մոտեցումը:
- Նույն ոգով՝ ռազմավարության նախագծի 1.1 և 1.3 բաժիններում նկարագրվում են երրորդ ռազմավարության արդյունքները և հակակոռուպցիոն ոլորտում Հայաստանի միջազգային պարտավորությունների կատարման ընթացքը՝ առանց գնահատելու դրանց

արդյունավետությունը՝ առնվազն միջազգային կազմակերպությունների կոռուպցիայի ընկալման համաթվերի անբարենպաստ արժեքների համատեքստում:

- Ներկայացվում են ծրագրի արդյունքներն այն դեպքում, երբ դեռ պարզ չէ, թե արդյոք բոլոր միջոցառումները հասցնում են ավարտել մինչև վերջնաժամկետը: Ընդ որում՝ խիստ կարևոր է, որ լինի արդյունքների և քաղաժ դասերի վերլուծություն՝ հետագա քաղաքականության ու միջոցառումների մեջ շտկումներ անելու և դրանց արդյունավետությունը երաշխավորելու նպատակով:
- Իրավացիորեն նշելով ներկա ռազմավարության մի շարք թերացումների մասին, այն է, մոնիտորինգի մեխանիզմի բացակայությունը, փաստաթղթի ոչ ճկուն լինելը և հանրային իրազեկման ծրագրերի բացակայությունը՝ ռազմավարության նախագիծը չի նշում նախորդ ռազմավարությունների իրականացման ամենամեծ թերացման՝ քաղաքական կամքի բացակայության մասին: Ոչ մի ակնարկ չկա կոռուպցիայի համակարգային բնույթի և դրա արմատական պատճառների մասին:
- Մոնիտորինգի մեխանիզմի բացակայությունը համարելով երրորդ ռազմավարության ամենալուրջ թերացումը՝ ռազմավարության նախագիծը, փոխանակ առաջարկելու լուծումներ, 3-րդ բաժնում մոնիտորինգի վերաբերյալ տալիս է միայն հնչեղ հայտարարություններ և բարի ցանկություններ: Այս մոտեցումը կարող է հանգեցնել նրան, որ մոնիտորինգի բացակայության մեխանիզմը կդառնա նաև նոր ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագրի կարևորագույն թերացումը:
- Հակակոռուպցիոն ռազմավարությունը պատշաճ չի անդրադառնում դատական իշխանությանը և բացի e-justice հարթակից չի առաջարկում միջոցառումներ դատական կոռուպցիայի առնչությամբ՝ մինչդեռ հստակ է որ օրենսդիր և գործադիր մարմիններում քաղաքական կամքի առկայության պայմաններում կոռուպցիան արմատախիլ անելու ճանապարհին հիմնական խոչընդոտ են լինելու կոռումպացված դատական համակարգը և դատավորները:
- Տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների դերը չափազանցված է և միջոցառումների ծրագիրն ավելորդ լցնված է տարբեր ոլորտներում դիսկրետ էլեկտրոնային գործիքների ներդրման առաջարկություններով՝ առանց ունենալու ոլորտներում առկա խնդիրների առավել համապարփակ պատկերն ու ներկայացվող միջոցառումների պատշաճ հիմնավորումները, ինչպես նաև՝ ամբողջականությունից զրկելով հակակոռուպցիոն քաղաքականության փիլիսոփայությունը:
- 2018թ. սեպտեմբերի վերջին Երևանում ներկայացվեց Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության հակակոռուպցիոն ցանցի կողմից իրականացված մոնիտորինգի չորրորդ շրջափուլի արդյունքում պատրաստված [գեկույցը](#), որում ներկայացվեցին բազմաթիվ առաջարկություններ Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիայի դեմ պայքարն առավել արդյունավետ դարձնելու առնչությամբ: Հարկ է նշել, որ այս գեկույցում բերված բավականին մեծ թվով առաջարկություններ պարզապես անտեսվել են Նախագծի հեղինակների կողմից:

Հաշվի առնելով ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022թթ. միջոցառումների ծրագրի նախագծի որակի, բովանդակության և ընդունման գործընթացի վերոնշյալ խնդիրները՝ պահանջում ենք կասեցնել Նախագծի ընդունման գործընթացը և

հնարավորինս սեղմ ժամկետում վերանայել փաստաթուղթը՝ շահագրգիռ հասարակական կազմակերպությունների ներգրավմամբ:

Ժամանակն է վերջ տալ նախորդ կառավարությունից ժառանգած ձևական ու կեղծ մոտեցումներին, և երկրի հակակոռուպցիոն քաղաքականության հիմնարար փաստաթուղթը համահունչ դարձնել կոռուպցիայի դեմ պայքարի հարցում քաղաքական կամքի առկայությանն ու հանրային ակնկալիքներին:

ՀՀ կառավարության մարմինների կողմից մասնակցային և բաց գործընթաց ապահովելու պատրաստակամության պարագայում պատրաստ ենք համագործակցել՝ ունենալով բովանդակային ներդրում փաստաթղթի վերանայման և բարելավման գործում:

Թրանսփարենսի հնթերնեշլ հակակոռուպցիոն կենտրոն

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ

Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան

Հետաքննող լրագրողներ ՀԿ

ԷկոԼուր տեղեկատվական ՀԿ

«Խաղաղության երկխոսություն» ՀԿ

Գլոբալիզացիայի և տարածաշրջանային համագործակցության վերլուծական կենտրոն ՀԿ

«Հարթակների փոխակերպման» իրավաստեղծ գործունեության հիմնադրամ

«Անգել» սոցիալական կրթամշակութային ՀԿ

«Տնտեսական իրավունքի կենտրոն» ՀԿ

Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամ

Հանրաին լրագրության ակումբ

Սոցիական արդարություն ՀԿ

Հանրային քաղաքականության հետազոտությունների ազգային կենտրոն

«Իրական աշխարհ, իրական մարդիկ» ՀԿ

Պետական կարիքների զոհեր ՀԿ

Տաթևիկ ՀԿ

«Ընտանիք և համայնք» ՀԿ

«Շողեր միություն» սոցիալ-կրթական ՀԿ

Մարդու իրավունքների հետազոտությունների կենտրոն

«Հուլյսի Մեծամոր» ՀԿ

Սպառողների աջակցման կենտրոն ՀԿ

«Ազատ քաղաքացի» քաղաքացիական նախաձեռնությունների աջակցման կենտրոն

«Հանուն հավասար իրավունքների» ՀԿ

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիա